

Թաղիս ազգայիններն գրեթե ընդհանրապես կա՛մ ձկնորս են, կա՛մ նաւավար, կամ ջրհանկիր եւ երբեմն ալ երեքն միանգամայն են:

Ասոնք ուրիշ թաղերու ազգայիններու պէս չեն, որ կարծեն թէ քաղաքական խնդիրները լուծուելուն պէս՝ Պիզմարք իշխանը պիտի գայ եւ իրենց հացագործին ստակը պիտի տայ. ուստի քաղաքական գործերու վրայ խօսելով չեն անցուներ իրենց ժամերը: Ասոնց ներքին կացութիւնը այն ատեն կխանգարուի, երբ տանը տիկինը հիւանդանայ, եւ արտաքին գործերն ալ այն ատեն կը վատթարանան, երբ Ամբակում եղբայրն տկարութիւն ունենայ եւ չկարենայ գործի երթալ: Երբ նաւակին թին կը կոտրուի՝ Ամբակում եղբօր համար *նաւային ցոյցի* նշան է, իսկ երբ նաւակը խորտակուի՝ *արտաքին միջամտութեան* նշան է. այլ երբ անառակին մէկն իւր կնկանը սիրտը գրաւել փորձէ՝ պատերազմ կը հրատարակէ եւ թող չտար, որ ուրիշ մը իր երկրէն մաս մը գրաւէ առանց արինհեղութեան:

Թաղիս ազգայիններն քաջ են. յետեւեղ չեն ըներ այն խօսքը, զոր չեն համարձակիր երեսդ ի վեր գրուցելու: Հաւատարիմ են իրանց խոստմանը. եթէ խոստանան քեզ ապտակ մ'իջեցնելու՝ անմիջապէս կգործադրեն զայն:

Ասոնք դպրոցասէր եւ եկեղեցասէր են. առանց ուսումնական ըլլալու՝ ուսման յարգը կը ճանաչեն եւ իրենց զաւակներու կրթութեանը համար կու տան իրենցմէ պահանջուած գումարը, ինչպէս նաեւ եկեղեցւոյն պայծառութեանը համար չեն զլանար իրենց լումայն:

Ո՛չ նարտ կը խաղան եւ ո՛չ թուղթ. գիշերները զբօսանքի կամ մարմնամարզութեան համար երբեմն իրենց կիները կը ծեծեն:

Խմելով կիսմեն օղին:

Կիներն ալ ճիշտ այրերու պէս են – աշխատասէր եւ անկեղծ: Ասոնց ներքինն շատ պարկեշտ է, իսկ արտաքինն, որ այլանդակ հագուստներով կներկայանայ՝ ներքինին հակապատկերն է: Թէեւ իրենց թեւերը, կուրծքերը եւ սրունքները բացած փողոցի մէջ լաթ կփռեն, սակայն դարձեալ վերադասելի են այն շատ մը կիներուն, որք գոց թեւերով, կուրծքով եւ սրունքներով տան մէջ լաթ կը փռեն: Այս կիները շատ անգամ իրարու հետ կը ծեծուին եւ կը հաշտուին:

Ասոնք ուրիշ կիներու վրայ սա առաւելութիւնն ալ ունին, որ ազգը շատցնելու համար մեծ զոհողութիւն, անձնանուիրութիւն կ'ընեն. իւրաքանչիւր կինն առ նուագն տասնվեց տղաներէ մայր կոչուելու պատիւն ունի: